



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N_145

Տուգանք նշանակելու մասին

12.05.2021թ.

ք. Երևան

~~Քննելով տեսչական մարմնի կողմից 2021թ. ապրիլի 12-ի N_173-Ա հրամանով «ԼՅՈՒՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ում կատարված~~
Տնտեսվարող սուբյեկտի անվանումը

ստուգման նյութերը (ստուգման ակտ N_173-Ա կազմված 10.05.2021թ., խախտումների մասին 21.04.2021թ. արձանագրությունը և այլ նյութերը), որոնցով բացահայտվել է, որ՝

ՍՊԸ-ն իրականացնում է ավտոմոբիլային բենզինի և սիզելային վառելիքի մանրաձախ վաճառք: Ստուգման արդյունքում պարզվել է, որ օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցները՝ թվով 3 հատ բաշխիչ աշտարակները փոխարինվել են թվով 2 հատ նորով, ներկայացվել է ստուգաչափման հայտ, սակայն 17.03.2021թ.-ից չեն ստուգաչափվել:

Փաստացի խախտվել է «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Կատարված իրավախախտման հանգամանքները և խախտման էությունը

Նշված իրավախախտման համար պատասխանատու է՝

Տնօրեն՝ Արա Սուրենի Զորյանը

իրավախախտողի անունը, ազգանունը, պաշտոնը

Ք.Երևան Էրեբունու փող. 11 շենք 49 բն.

մշտական բնակավայրը և հասցե

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 244 պրիմ 7 հոդվածով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Տվյալ իրավախախտման համար պատասխանատու ճանաչել Արա Զորյանին և կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158 հոդվածի 23-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը, սահմանել տուգանք՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

2.Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305 հոդվածի՝ տուգանքը պետք է վճարվի **Պետական բյուջե 900005024014 հ/հ** տուգանք նշանակելու մասին որոշումը իրավախախտողին հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

3.Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

4.Տուգանքը սահմանված ժամկետում վճարելուց հետո քանկային կտրոնի պատճենը անհրաժեշտ է 3 օրվա ընթացքում ներկայացնել տեսչական մարմնին՝ ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեով:

5.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում Վարչական դատարան:

Տեսչական մարմնի ղեկավար՝



Արմեն Կոտոյան

581/21-8